# ՆՈՐ-ԴԱՐ

№ 44 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 21 Մարտի 6 1885 Հինգշաբթի 21 Մարտի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 44

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր.50 կ. Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում մասնայն խմբագրատանը։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչ 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով և Յայտարարությունների բառին 2 կ., երկրամասերի համար՝ կրկնապատիկ։


## „ՆՈՐ-ԴԱՐ“-Ի

*Ներկայ* 1885-*ի համար բաժանորդագրությունը շարունակվում է։ Բաժանորդ են գրվում մի միայն խմբագրատանը,* Պօատաատան *եւս։ Յամերա վրաց եկեղեցուն հանդէպ։ Օտարաքաղաքացիները դիմում են խմբագրության հետևեալ հասցէով՝* Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»։

*Բաժանորդագինն է. տարէկանը՝* 10 *ր., վեց ամիսը՝* 6 *ր., երեք ամիսը՝* 3 *ր.* 50 *կ.։*

*Լրագրատում և Թիւրքիայում տարեկան բաժանորդագինը՝* 30 *Ֆրանկ։*

*Բաժանորդագրությունը ընդունվում է միշտ ամսի* 1-*ից հաշուած։*

Редакція и контора газ. «Норъ-Даръ» помѣщаются въ центрѣ города, за Почтой, на Тройцкомъ переулкѣ, въ домѣ № 9.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Առաջնորդք։ — Կաթողիկոս. Խնդրի առթիւ խորհրդածութիւններ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Կ. Պոլիս։ Արդուին։
Բազմաբան.—Թիւրքիա։ Կեդրոնական Ասիա։ Միացեալ Նահանգներ։ Լուրեր.
Խառն լուրեր.
„Նոր-Դար“-ի պատասխաններ։
Հեռագիրներ։
Թերևդիմ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.—Իմ կաթոլիկ հարսնացուն։

Թիֆլիս, 20 Մարտի 1885 Թ։

## ԿԱԹՈՂԻԿՈՍ. ԽՆԴՐԻ ԱՌԹԻԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Պօլսոյ ազգային ժողովն այս անգամ կաթողիկոսացուները չէ ընտրել, այլ անցեալ տարուայ ընտրելիների եւանուն ցանկը վերստին հաստատել է Ներսէս պատրիարքի մահուամբ գոյացած պակասը լրացնելով Եկեղեցական Համագումար ժողովի անցեալ տարուայ եօթանուն ցանկից։

Այսպէս վարուելով կարծում ենք, որ ազգային ժողովը գործում է իր Սահմանագրութեան ոգւոյն դէմ։ Վերահաստատել անցեալ տարուայ ընտրութիւնը առանց նոր ընտրութեան և մի ուրիշ ընտրող ժողովի անցեալում կատարած ընտրութեան ցանկից մի անուն վերցնել և իւր ցանկումը դնել, այնպէս որ երկու ընտրելիները քուէարկուած են հանդէս գալիս թէպէտև անցեալում, իսկ երրորդը առանց քուէարկուելու—խօստովանում ենք, որ սա այնպիսի մի Սահմանադրութիւն է, որի նմանը Թիւրքիայից դուրս գոյութիւն չունի։ Բայց մեզ համար պօլսի ազգային ժողովի ձայնը կամ որոշումը միմիայն բարոյական նշանակութիւն կարող է ունենալ, և այդ էլ այն չափով, որ չափով նա կը համապատասխանէ մեր Եկեղեցու, ս. Էջմիածնի շահերին։ Հետևաբար՝ եթէ ազգային ժողովի ձայնը դէմ կը լինի մեր եկեղեցու, ս. Էջմիածնի, մեր ժողովրդի շահերին, այն ժամանակ այդ ձայնը մեզ համար գոյութիւն չունի և չը պիտի ունենայ։

Հետաքրքիր է ազգային ժողովի միւս որոշումը.—ազգային ժողովը ուզում է երկու պատուիրակով մասնակցել Էջմիածնի «վերջնական» ընտրութեանը։

«Վերջնական» բառով ցոյց է տալիս ազգային ժողովը, որ մի կեղծ և անորոշ դրութեան մէջ է դրել ինքն իրեն։

Մեր երկրի և Հայաստանեայց ս. եկեղեցու օրէնքների համաձայն կաթողիկոսը մի անգամ է ընտրվում, այն էլ ս. Էջմիածնի տաճարում, հետևաբար «վերջնական» բառը միտք չունի։

Հետաքրքրելի է իմանալ թէ այդ երկու պատուիրակները իրենց երկու քուէի իրաւունքը ազգային Սահմանադրութեան թէ Պալաժէնալի վերայ են հիմնում։

Եթէ Սահմանադրութեան վերայ է հիմնուած, պէտք է ասենք, որ կաթող. ընտրութեան մէջ Պալաժէնիան ազգային Սահմանադրութիւն չէ ճանաչում, իսկ եթէ Պալաժէնիայի վերայ, զարմանում ենք, որ ազգային ժողովը միմիայն Պօլսի թեմին է թոյլ տալիս երկու քուէով—Պալաժէնիայի տրամադրութեան համաձայն — մասնակցելու կաթողիկոսի ընտրութեանը, զրկելով միւս թեմերը այդ իրաւունքից։

Մենք չենք ուզում աւելին ասել, մի փոքր լոգիկայով դատող մարդը, մի փոքր իրաւական զարգացման տէր անձն կը տեսնէ, որ Ազգային ժողովը իրեն կեղծ դրութեան մէջ է դրել և իւր որոշումները ոչ մէկ սկզբունք չը պահպանելով հանդերձ ամեն բան քանդում է։

Դուցէ այդ երկու պատուիրակները ուրիշ յանձնարարութիւն ունին, այդ կը տեսնենք։

Նուաստ լինելու է կաթողիկոսի ընտրութիւնը, Աստուած տայ, որ յաջողութեամբ վերջանայ, «Նոր-Դար»-ն էլ ազատուի իւր գոյութեան սկզբից իւր վերայ դրած ծանր լուծից։

Որքան մեր կարողութիւնը նեղում էր, մենք գործեցինք, մեր մտքերը յայտնեցինք, մեր դիտողութիւնները արինք կաթողիկոսական խնդրի վերաբերութեամբ, այսուհետև մեզ շատ քիչ բան է մնում ասելու, և այն էլ կասենք։

Թուլամորթ և անկիրթ մարդկների փողոցային լեշոցները, խարդախ և շահամոլ անձինքների քսու գրպարտութիւնները, ձրի ժողովրդականութեան հետամուտ պերախտ աբեղաների դարանները, ամբոխին շողոքորթող եսամոլ մամուլի անվայել և անպատկառ յարձակումները չը կարողացան «Նոր-Դար»-ի ուղղութիւնը փոխել։ «Նոր-Դար»-ն յարգելով ուրիշի համոզմունքները, ունի իւր որոշ համոզմունքները և այն ճանապարհը, որ նա ճշմարիտ, արդար և ազգին ու եկեղեցւոյն օգտաւէտ է համարում, այն ճանապարհով պէտք է գնայ նա մինչև վերջը հաստատ, եթէ ինքը մենակ էլ մնալու լինի, և եթէ այդ ճանապարհի վերջումը նրա գերեզմանը լինի փորած։

Այսօր կարող ենք ասել, որ մեր ընտրած ճանապարհի վերայ մենակ չենք, որ «Նոր-Դար»-ի կողմն է մեր ժողովրդի ստուար մեծամասնութիւնը, և այդ կեղծ խօսքեր, փքուն խօսքեր չեն, այլ սարգ իրողութիւն։

Ս. Ս.

## ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՕՐՈՒՄ։—Գիւղական քահանաների վիճակը աննախանձելի է։ Երևակայեցէք մի քահանայ, որը ունի 80-աչափ տուն ժողովուրդ ցրուած չորս կամ հինգ գիւղերում և մեծ պասի պատրաստութեանը քան թէ աստուածապաշտութեանը։ Ասացէք ինձ, ինչո՞ւ համար էք զժբաղդացնում երկու սիրող սրտեր։ Ինչո՞ւ համար էք խեղդամահ անում մի կեանք, որ սկսում է շնչաւորուիլ, մինչև այդ ձեզ սուրբ Տիրամօր Որդին է սովորեցրել։

—Որդեակ, դուք գարձեալ Հայհոյում էք. բայց դա չանցանք է, կրկին սկսաւ խօսել քարոզիչը։ Մենք սուրբ Աւետարանի աշակերտներ ենք և քարոզում ենք խաղաղութիւն. մենք ձեզ էլ ներում ենք, որովհետև Յիսուս Քրիստոսը ներողութիւն քարոզեց, մենք աղօթում ենք միայն հոգիների փրկութեան համար...

Այս անեպատակ և անմիտ խօսքերը սկսում էին ձանձրացնել ինձ, քարոզիչը խուսափում էր իմ հարցերին ուղղակի պատասխանելուց։

—Յրանցիսկոս Լօրետանօ, ձեզ երդուեցնում եմ ձեր վարդապետ Յիսուսի անունով, խօսեցէք ինձ. հետ անկեղծութեամբ. ես անմիտ քարոզները լսելու ժամանակ չունիմ.—ինչո՞ւ համար էք արգելում իմ և Լուսինեանի դատեր ամուսնութիւնը. դուք որ խաղաղութիւն էք քարոզում, դուք որ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԻՄ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

ԺԲ.

ԿԱԹՈԼԻԿ ԿՂԵՐԻ ՄՕՏ.

Բաժանուելով Մարգարիտայից ես դիմեցի դէպի Պատեր-Սիմօնի տունը։ Ճանապարհին զանազան մտքեր պաշարել էին ինձ. կամ մտածում էի՝ գընալ և այդ մարդուց հաշիւ պահանջել իւր գործած չարութիւնների համար և տալ նրան իւր արժանաւոր հատուցումը. կամ դիմել նրան և աղաչել՝ որ հեռացնէ ինձանից իւր ցասումը և արգելք չը դառնայ մեր միութեանը. երբեմն էլ մտածում էի՝ ընկնել քարոզիչ Լօրետանօյի ոտքերը և աղերսել նրա օգնութիւնը, դիջանելով նրան մինչև անգամ իմ կրօնական համոզմունքները... բայց վերջին երկու մտքոցը իմ արժանապատուութիւնը վիրաւորող էի գտնում. — «ոչնչացնել, կամ ոչնչանալ» վճռեցի ես վերջապէս և նոր ուժով կազդուրուած քայլերս չտապեցրի։

Երեք ընկերները հենց նոր էին վերադարձել Լուսինեանների տնից։ Շատ քաջը բարեկամութեամբ նրանք ընդունեցին ինձ. Պատեր-Սիմօնը քաղաքավարութեամբ ծանօթացրեց ինձ Ֆրանցիսկոս Լօրետանօ քարոզչի և գիտնական Պատեր-Պետրէի հետ։

Ֆրանցիսկոս Լօրետանօն հասակն առած մօտ յիսուն և հինգ տարեկան մի մարդ էր. բարձրահասակ և վայելչակազմ, դէմքը շատ քաղցր և ժպտող. նրա երեսի վերայ փայլում էր կատարեալ առողջութիւն, իսկ այտերը վառվում էին մի նորատի կնոջ դէմքին յատուկ կարմրութեամբ։ Նրա սափրած ծնոտի տակ հանգչում էր մի երկտող ծնօտ, որ ալիքաւոր անհաւասարութեամբ իջնում միանում իւր պարանոցի հետ։ Նրա ամբողջ կազմուածքի ներդաշնակութիւնը խանգարում էր միայն պատերական լայն և ուռած փորը, որի վերայ չէր կարողանում տիրապետել իւր ոչ պակաս լայնադիր կուրծքը։ Մի քանի րոպէ ես հետաքրքրութեամբ նայեցի նրա վերայ։

Այդ մարդին արտաքուստ դատելով ես չար չը գտի. նրա ձայնի և նայուածքի մէջ կար մի բան, որ հակասում էր։ Շինծու էր այդ լիքն բնական, դեռ չը գիտէի։

Պատեր-Պետրէն ընդհակառակը նիհար, հակակրական դէմքով և մաշուած կազմուածքով մի արարած էր. նրա դէմքի և նայուածքի մէջ ես պարզ կարդում էի դիւական չարութիւն. նրա ձայնն անգամ անախորժ էր և խռպոտ։ Առաջին անգամից իսկ ես զզուեցայ նրանից։

Նստելով ինձ առաջարկած աթոռի վերայ, ես թոյլ չը տուի իմ նոր բարեկամներին մի որև է քաղցր խօսք վոխանակել ինձ հետ, կասկածելով կորցնել խստութիւնս. ուստի ուղղակի գործից սկսեցի։

—Վերապատուելի հարք, դուք արդէն ամեն բան գիտէք, և կարող էք գուշակել նոյն իսկ իմ այցելութեան պատճառը, ասացի ես, հետևապէս ես ձեզ նոր բան պատմելու կարևորութիւն չեմ տեսնում։ Ես սիրում եմ Լուսինեանի աղջկան և արդէն նշանուած եմ նրա վերայ, այդ գիտէք դուք։ Բայց մեր ամուսնութիւնը ձեզ հաճելի չէ, որովհետև աղջիկը պատկանում է կաթոլիկ դաւանութեան, և դրա համար էլ դուք ամեն ջանք գործ էք դնում խափանել մեր միութիւնը։ Ես եկայ հարցնելու ձեզ վերապատուելի հարք,—թէ ինչ բարիք ստեղծելու համար էք գործում այդ չարութիւնը, և թէ ինչ է ձեր պահանջը ինձանից։

—Չարութիւն մենք չենք գործում, քաղցրութեամբ պատասխանեց քարոզիչը. Յիսուս Քրիստոսը երբէք իւր աշակերտներին չարութիւն չէ սովորեցրել...

—Այդ ես գիտեմ. դառնութեամբ ընդհատեցի նրան. բայց դուք ձեր վարմունքով նրա աշակերտներին չէք նմանում. Քրիստոս սէր էր քարոզում, իսկ դուք սէրը քանդում էք...

Այս խօսքի վերայ Ֆրանցիսկոս Լօրետանօն ձեռքերը դէպի վեր բարձրացրեց և աչքերը առաստաղի վերայ սևեռելով երկիւղած ձայնով բացագանչեց. «Ով սուրբ Տիրամայր. բարեխօսիր քո անմահ Յիսուսին, որ ներէ այս հայհոյող մահկանացուին, որ լուսաւոր է այս մոլորեալ աչքերը և առաջնորդէ նրան դէպի Ճշմարտութեան Ճանապարհը...»

Խոյն միւս երկու Ֆրէրները էլ հետևեցին քարոզչի օրինակին. կարծես թէ այստեղ մի կրօնական ծանր արարողութիւն էր կատարվում։

Այս կատակերգութիւնը թէպէտ մի վայրկեան չարժեց իմ ծիծաղը, բայց աւելի զայրոյթս գրգռեց։ Ես տեսայ որ այս մարդիկ ինձ մի անփորձ տղայի տեղ դնելով կրօնական տէօրհանելով են ուզում ճնշել սրտիս մէջ ալեկոծուող կատաղութիւնը։

—Վերապատուելի հարք, ես հաւատում եմ ձեր չնմուտանդութեանը, ընդհատեցի ես նրանց, բայց այս րոպէին ես կարօտում եմ աւելի ձեր Հրշմարտասիրութեանը քան թէ աստուածապաշտութեանը։ Ասացէք ինձ, ինչո՞ւ համար էք դժբաղդացնում երկու սիրող սրտեր։ Ինչո՞ւ համար էք խեղդամահ անում մի կեանք, որ սկսում է շնչաւորուիլ, մինչև այդ ձեզ սուրբ Տիրամօր Որդին է սովորեցրել։

—Որդեակ, դուք գարձեալ Հայհոյում էք. բայց դա չանցանք է, կրկին սկսաւ խօսել քարոզիչը։ Մենք սուրբ Աւետարանի աշակերտներ ենք և քարոզում ենք խաղաղութիւն. մենք ձեզ էլ ներում ենք, որովհետև Յիսուս Քրիստոսը ներողութիւն քարոզեց, մենք աղօթում ենք միայն հոգիների փրկութեան համար...

Այս անեպատակ և անմիտ խօսքերը սկսում էին ձանձրացնել ինձ, քարոզիչը խուսափում էր իմ հարցերին ուղղակի պատասխանելուց։

—Յրանցիսկոս Լօրետանօ, ձեզ երդուեցնում եմ ձեր վարդապետ Յիսուսի անունով, խօսեցէք ինձ. հետ անկեղծութեամբ. ես անմիտ քարոզները լսելու ժամանակ չունիմ.—ինչո՞ւ համար էք արգելում իմ և Լուսինեանի դատեր ամուսնութիւնը. դուք որ խաղաղութիւն էք քարոզում, դուք որ

# ՖԼՖԼԱՑՈՒՄՖԻՖՈՒՐ

Ա. ՊՈԼԻՍ, 15 ՓԵՏՐՎԱՐԻ։ *) Շուտ

*) Ինչ է ֆլֆլացումֆիֆուրը, ես ինքս էլ չգիտեմ, բայց ինչ-որ բան է, որ ամեն օր հանդիպում ենք մեր կյանքում։ Ֆլֆլացումֆիֆուրը կարող է լինել և՛ մի ծանր հիվանդություն, և՛ մի ուրախալուր, և՛ մի ծանր վիրավորանք, և՛ մի մեծ շահ, և՛ մի մեծ կորուստ, և՛ մի մեծ ուրախություն, և՛ մի մեծ վիշտ, և՛ մի մեծ հարստություն, և՛ մի մեծ աղքատություն, և՛ մի մեծ սեր, և՛ մի մեծ ատելություն, և՛ մի մեծ հաղթություն, և՛ մի մեծ պարտություն, և՛ մի մեծ ծիծաղ, և՛ մի մեծ լաց, և՛ մի մեծ ամուսնություն, և՛ մի մեծ ամուսնալուծություն, և՛ մի մեծ ծնունդ, և՛ մի մեծ մահ, և՛ մի մեծ հարություն, և՛ մի մեծ ոչինչ, և՛ մի մեծ ամեն ինչ։ Ֆլֆլացումֆիֆուրը կարող է լինել ամեն ինչ, ինչ որ կա աշխարհում, ինչ որ չկա աշխարհում, ինչ որ կարող է լինել աշխարհում, ինչ որ չի կարող լինել աշխարհում։ Ֆլֆլացումֆիֆուրը կարող է լինել ամեն ինչ, որովհետև ֆլֆլացումֆիֆուրը ոչ մի բան չէ։ Ֆլֆլացումֆիֆուրը ոչ մի բան չէ, որովհետև ֆլֆլացումֆիֆուրը ամեն ինչ է։ Ֆլֆլացումֆիֆուրը ամեն ինչ է

ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Ի ՀԱՍԱՐԱԿ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Ներկայացուցիչ՝ Ա. Ա. Ա.

հոգուց բաղկացած, ապրում է Նիւ-Եօրքի հաշուով։ Իսկ երկրի խորքերում աղքատութիւնը ևս առաւել մեծ է և այս վայրկենիս գաղթել Ամերիկա, նշանակում է իւր կամքով նրեն ամեն տեսակ զրկանքներին ենթարկել։

—

„Русскій Курьеръ“ լրագրին հաղորդում են, որ Թիւրքիայի ռուսական դեսպանութեան խորհրդական պ. Օ-նու, եկել է Պետերբուրգ յոյժ կարևոր յանձնարարութեամբ մեր Կ.-Պոլսի դեսպանից, պ. Նելիդովից։ Բացի այդ պ. Օնու տեղեկութիւն կը տայ ռուսաց արտաքին գործոց մինիստրին այն տրամադրութեան մասին, որի մէջ գտնւում են Թիւրքիայի մայրաքաղաքի մարքերը Ռուսիայի կողմից։ Բ. զրան արած առաջարկութեան մասին կոմս Լօրիս-Մելիքովին ռուսական դեսպան նշանակելու Կ.-Պոլսում։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՇԽՈՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՆԴԱՆՕԹ։—Գրեմբելլում, Կայիւի զինարանում, ներկայումս աշխարհիս ամենամեծ թնդանօթն է չինվում, որի երկայնութիւնը կը լինի 12 մետր (մօտ 16 արշին)։ Նա կարձակէ 19 կիլօմետր հեռու մօտ 18 վերստ), իսկ նրա վառօդի քանակութիւնը կը կշռի 808 կիլօգրամմ, մօտ (50 պուդ)։ Նոր թնդանօթ-հերքուէլէսը ցոյց կը տրուի Անուիերպենի աշխարհանդէսում և կարժենայ իւր սայլով միասին 500,000 ֆրանկ։ (Ind. Belge)

—

ԱՐՔԱՅԱԶՆ ԳՐՈՂՆԵՐ։—„Daily News“ լրագիրը նկատում է որ ներկայումս Թագաւորական ցեղի անձինքների մէջ կան բազմաթիւ գրողներ. օրինակ՝ Վիկտորիա Թագուհին, Օսկար II Շվեդիայի Թագաւորը, Դոն-Լուդովիկ Պորտուգալիայի Թագաւորը, Պարսից շահը, Ռումինիայի Եղիսաբեթ Թագուհին, Մոնտենեգրոյի իշխան Նիկողայոսը, Դոն Պեդրո II, Բրազիլիայի կայսրը, և Բաւարիայի Թագաւոր Լուդովիկոսը։ Անգլ. ական Թագաւորական տան անդամներից գրականութեան մէջ յայտնի են նամանաւանդ գերմանական արքայազն դուստրը, էդինբուրգի Հերցոգը, Վելս պրինցի զաւակները՝ Ալբերտ, Վիկտորն ու Դէորգը։ Ցետոյ աւստրիական Թագաժառանգը, պրինց Լուդովիկ Բօնապարտը նմանապէս պարապում էին գրականութեամբ։

## ,,ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ԲԱԳՈՒ. պ. Բ. Շ.—,,Նոր-Դար“-ին բաժանորդ կարելի է գրուել ցկէաց ամսի 1-ից հաշուելով և ոչ Թէ կէսից։ Տասն ամսուայ բաժանորդագինն է 8 ր. 75 կ.

—

ԼԵՆԿՈՐԱՆ։ պ. Ս. Լ.—Կարդացէք վերևի պատասխանից ինչ որ Ձեզ է վերաբերում։ Պօստային մենք իւրաքանչիւր բաժանորդի համար ամբողջ տարուան վրայ վճարում ենք, որը մօտ 2 րուբլի է անում, հասցէի տպագրութիւնը հաշուած։ Իսկ եթէ մարկայով ուղարկենք իւրաքանչիւր համարը. օրի. նակ Բագու, մեզ համար ծախք կը լինի մօտ 5 րուբլի։

ՎՐԻՊԱԿ. Թերթիս № 42-ի բանասիրականում առաջին երեսի 3-րդ սիւնակի մէջ տպուած է. «լուսնի սկաւառակը աննշմարելի կերպով բարձրանում ծառերի էր ալիքների վրայից»—պէտք կարդալ „բարձրանում էր ծառերի ալիքների վրայից“։ Երկրորդ երեսի 1-ին սիւնակում տպուած է. „մենք կսիրենք միմեանց անկեղծ և անկաշտ սիրով“.—պէտք է կարդալ „անկեղծ և անկաշտ սիրով“։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀՆԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

19 Մարտի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Новое Время» լրագիրը հաղորդում է որ իրաւունք է տրուում պետական բանկին առանձին տարրագրութեամբ ընդունել գեղչելու և 12-ամեայ առևտրական պարտամուրհակները, այլ և փող տալ արդիւնաբերող ընկերութիւնների ակցիաներով. իսկ արդիւնաբերող գործարանների անունով փող տալը վճռուած չէ։

ՓԱՐԻԶ. Երեկ արտաքին գործոց մինիստրութեան մէջ հաւաքուեցան մեծ պետութիւնների պատուիրակները Սուեզեան ջրանցքի հարցի քննագատութեան համար։

ԼՕՆԴՕՆ։ Ֆիգմօրիսը յայտնեց պատգամաւորների ժողովում, որ թէև Ռուսիայի պատասխանը դեռ ստացուած չէ, բայց իւր ստացած տեղեկութեանց նայելով, պատասխանը շատ հաշտեցուցիչ է, ուստի նա, Ֆիգմօրիսը հրաժարվում է այժմս յայտնութիւններ անել, որոնք կարող են վնասել դժուարութիւնների շուտով վերջացնելուն։

19 Մարտի.

ՌԻԿԱ։ Սառոյցը Դվինա գետի վերայ շարժուեցաւ Վիտեբսկ, Դինաբուրգ և Ֆրիդրիխշտադ քաղաքների մօտ. Ռիգայից մինչև բերանը արդէն մի քանի օրէ, ինչ որ անցել է սառոյցը։

ՓԱՐԻԶ. Լրագիրները ասում են, որ մինիստրութեան փոփոխութիւնը չի փոխելու Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը և կարծում են, որ նոր մինիստրութիւնը բաղկացած կը լինի պարլամենտական մեծամասնութեան ամեն խմբակներից։ Հրամայուած է անյապաղ Ծօնկին ուղարկել 8000 հետևակ զօրք, 6 գունդ ամբարձ զօրքից և բերնիկներից էլ մի գունդ հեծելազօրք։ Իսկ 50,000 զօրք ուղարկելու գիտաւորութիւնը յետաձգուած է մինչ պատգամաւորների ժողովից պահանջած գումարի վճռի վաւերացումը։ Յոյս ունին, որ 10,000 զօրքի տեղափոխումն կը պահանջի 35 օր։

ԼՕՆԴՕՆ. Պատերազմական մինիստրը պատգամաւորների ժողովում յայտնեց, որ կարելի է յուսալ Ռուսիայի հետ ծագած տարակուսանքների բարեյաջող վախճանի վերայ և ասաց որ Անգլիայի պատերազմական պատրաստութիւնները միայն նախապահպանողական միջոցներ են, որոնց չեռք է զարկում Աւղանիայի վերաբերութեամբ ունեցած պարտաւորութիւնների հիման վերայ և վիճելի հողի հեռաւորութեան պատճառով։

ՌՈՒՎԱԼ-ՊԻՆԴԻ. Աւղանիայի էմիրը այսօր առաւօտեան այստեղ հասաւ և մեծ պատուով ընդունուեցաւ։

20 Մարտի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր Գերմանիայում մեծ հանդէսով կատարուած Բիսմարկի 70-ամեայ տարեդարձի առթիւ «Journal de St.-Petersbourg» ասում է որ Ռուսիան բոլոր սրտով միանում է այս ծանակատարութեան հետ, որովհետև Բիսմարկը անխօնջ աշխատել է բարեկամութիւն պահպանելու երկու պետութեան մէջ։

ՓԱՐԻԶ. Սենատը ընդունեց առանց վիճաբանութեան պատգամաւորների ժողովից վաւերացրած 50 միլլիոն ֆրանկի փոխառութիւնը Տոնկինի պատերազմի համար։

Նոր մինիստրութեան կազմութիւնը դեռ յայտնի չէ. Գրեվի բանակցութիւններ է անում Ֆլուրանսինէի հետ։

## ԹԵՐ ԵՒ ԴԷՄ

ԳԱՆՁԱԿ, 18 մարտի.—«Մեղու»-ի 10-դ №-ի մէջ պ. «Թ. Դ»-ը իրը Թէ հերքելով «Նոր-Դար»-ի մէջ տպագրուած «Ի. Զ.» ստորագրած յօդուածը հանդէս է բերում, ոչ Թէ բուն եղելութիւնը, այլ «խնամական կուսակցութեան կրքերից» չարժուած, Թէ Ճշմարտութիւնն է յեղաշրջում և Թէ մի քանի սի պատիւը չոչափում։ Ուստի մեծաքանչ խմբագիր, հարստահարուած Ճշմարտութիւնը վերականգնելու համար, խնդրեմ այս փոքրիկ գրուածիս տեղ չնորհէք ձեր պատուական „Նոր-Դար“ լրագրի էջերում ընդդէմ „Մեղու“-ի մէջ տպուած «րողոքին» ինչպէս պ. յօդուածագիրն է անուանում, Բայց Թող իմանայ պ. „Թ. Դ.“-ը որ իմ յօդուածը ուղղուած է ոչ Թէ նրեն, այլ խաւարի մէջ խարխափող մի փոքրիկ խմբակի, որը լոյս աշխարհ դուրս գալու համար Թ. Դ-ին նրեն վահան է ընդունում։ (Ապրիք լաւ առաջնորդ ունիք. միջնադարեան ասպետի պնակից յետ չի մնալ)։ Մեր Թ. Դ.ը խրախուսուած խմբակից՝ հեևակայական զառանցանքների մէջ բողոքում է անարդարութեան, անխղճմտանքութեան դէմ. բողոքում է Ի. Զ-ի դէմ, որ չանդգնել է կաթոզիկոսութեան պատգամաւորների ընտրութիւնը «չաղող» համարել՝ աչքի առաջ ունենալով ընտրուածների անձնասէրութիւնը։ Բողոքում է որ ընտրուածները տեղեկութիւն անգամ չ'ուներն մեր յայտնի եպիսկոպոսների մասին, Թող Հէ նրանց գործերի մասին“, Երևի մեր պարոնի կարծիքով ամենայն կիւրակի եկեղեցու մօտ իւրաքանչիւրը մի մի լրագիր ձեռքը առած պիտի բղաւէին, Թէ Մարկոսը լաւ է Փիլիպոսից, կամ Փիլիպոսը այս արժանաւոր կոզմերով աւելի ցանկալի է Լուսաւորչայ գահին բազմած տեսնել, քան Մարկոսին՝ որը համեմատաբար շատ գործերով հեռի է մնում Փիլիպոսից և այլն...Թող իմանայ պ. Թ.-ը որ խելացի մարդիկ ապառաժոտ տեղերում չեն ձգում իրենց սերմը-միտքը, այլ պարարտ տեղերում, որովհետև նրանք գիտեն, որ նրանց ասածները քամին չէ տանելու, ոչնչութեան մէջ չէ մտնելու, այլ պատրաստ հողում արմատ է բռնելու։

Մենք ընդհակառակը մի քանի անգամ բաղդ ենք ունեցել լսել նրանց միտքը ընտրելի կաթոզիկոսացուների վերաբերմամբ և շատ գոհ ենք մնացել, որ Ճանաչելիս են եղել ոչ միայն նորերի, այլ և անցեալ եպիսկոպոսներից չատերին։ Պարոնը, չարունակելով ասում է, որ «Հասարակութիւնը ոչ ընտրութեան ժամանակ, ոչ էլ ղուրսը չէ յայտնել իւր կամքը նրանց»։ Այս տողերից մեր պ. Թ. Դ-ը այն եզրակացութեանն է գալիս, որ նրանք «Հասարակութեան կամքը չեն կարող ներկայացնել»։ Ոչ. շատ էք սխալվում, պարոն Թ. Դ., որովհետև հասարակութիւնը ընտրելով նրանց գիտակցաբար, պէտք է ուրեմն և Թոդնէը նրանց ազատ լսդմտանքին և ոչ Թէ ինքը մատնանիշ անէը այս կամ այն մարդու վերայ, որովհետև ընտրութեան ակզբունքը ինքն ըստ ինքեան վկայում է այդ։

Ցետոյ պարոնը զարմանում է, որ «մի ստորին պաշտօնեայ» Հա, Հա, Հա... (երևի ինքը բարձր պաշտօնեայ է!! „մի պետնազիստ.“ Հ՜ըմ... (որովհետև ինքը համալսարանական է), «մի ուսուցիչ» որովհետև ինքը պրօֆէսսոր էր համալսարանում, ուր աւարտեց) նոր ոյժեր են։ Հապա, պարոն Թ. Դ. կարող են նոր ոյժեր կազմել, բաս գուք ինչվո՞ էք հասկանում նոր ոյժը։ Հէնց գիտէք նոր ոյժ կը լինէը այն ժամանակ, երբ գրանց տեղ լինէին Ձեզ նման ասպետները։ Նոր ոյժ կարող են կազմել ուրեմն գրագիրները, տիրացուները, գիւղացիները...Դալով այն հանգամանքին, երբ Թէ տուփի մօտից հեռացրին վերոյիշեալներից երկուսին», այդտեղ զարմանալու ոչինչ չը կայ, որովհետև մենք շատ լաւ գիտենք Թէ բողոքողն էր։ Բողոքողն էլ էր զարմացել իւր վերայ, որ ինքը մի այսպիսի գործում դեր է խաղում, և ցոյց տալու համար, որ ինքն էլ է այն տեղ (մանդայ բուրդայիամ) և մի քանի ժամ իրաւունք ունի, բողոքեց, Թէև բոլորովին բողոքելու կարիք չը կար, որովհետև տուփի մօտ կանգնած էին երկու քահանայ, ուրեմն նա ոչինչ չէր կարող անել, որոյ մասին չատերը քահանայքը նոյն իսկ նախագահն կը վկայեն։

Մեր պարոնը գիւղացոց «միամիտ» համարելով կարծում է, (տեսէք Աստուծու բանը... իրը Թէ ինքը նրանցից շատ բան է հասկանում) որ ես նրանց խարեցի և իրը Թէ գիւղացոց ձանձրանալու պատճառով՝ ասացի Թէ, „դուք մեր ցանկ սցածը կատարեցէք այսուհետև ձեմ քուէարկիեն սևացրէք»։ Աւաջինը՝ Թող պարոնը իմանայ, որ այդտեղ կային գիւղացիք, որոնց ես անձամբ ճանաչում եմ, որոնք ոչ Թէ «միամիտ», այլ բնութեան ծոցում մեծանալով աւելի հեռատես, աւելի փորձառու են և աւելի լաւ են ճանաչում իրենց ընտրելի պատգամաւորին, քան ինքը իւր համալոհնելով։ Ասածիս ապացոյց կարող է լինել այն դէպքը, որ երբ մի պատգամաւոր մի գիւղացուց հարցրեց, Թէ ձեմ անունն է գրում... պատասխանը եղաւ. „այդ քու գործը չէ, ես իմ գործը լաւ եմ ճանաչում“։ Երկրորդ. ես այնպէս չեմ ասել ինչպես պ. Թ. Դ-ը գրում է. այլ երբ գիւղացիք սկսան ցրուել, ասելով որ «մենք մերը արդէն ընտրել ենք, էլ չենք ուզում ուրիշին քուէարկել» ես նրանց բացատրելու համար ասացի, որ դուք պէտք է քուէարկէք մի՛ւսներին էլ մինչև վերջը և եթէ դուք ձեր կարծիքով ձեր պատգամաւորը ընտրած էք համարում կարող էք չուզելու համար սևը գցել, բայց այսուամենայնիւ պէտք է սպասէք վերջին։

Վերջապէս մեր պ. Թ. Դ-ը իմ անձնասիրութեամբ չը բաւականանալով, իւր բարեմակրդմանի հայեացքը տարածում է քաղաքից գուրս, ամէն մի խնդրի մինչև ոսկրը ներս Թափանցելով հասնում է ու հօրս պատիւն էլ է իւր սուրի!!! գրչին Ճաշակել տալիս։

Ասում է «որ Հայոց ազգեցութիւն է ունեցել գիւղացոց վերայ»։ Ոչորմելի բան, մերթէ իմ Հայոց կարող էր բացի ինձանից և մեր երկու գիւղացիներից Գանձակի գաւառի բոլոր գիւղացի պատգամաւորների վերայ ազգեցութիւն ունենալ։

Նամակս չերկարելու համար մի երկու խօսքով վերջ եմ տալիս իմ Թ. Դ-ի հետ ունեցած հաշուին։ Այո, Թ. Դ., «ժամանակը ոչնչացնում է ամէն բան“. և այդ շատ իրաւացի է։ Այն մարդիկ, որոնք ձեր կարծիքով իրը Թէ Գանձակեցոց երեսը պար չէին անում այս անգամ անհամապատասխան գըտնուեցան։ Էհ, ինչ արած որ պ. Յակոն ու Մարիոսը չ'ընտրուեցան, բացի այդ՝ մերթէ կարելի է այդպէս չուտ համոզմունքը փոխել (Թէև քեզպէսների համոզմունքը մինուս գերօրէն է հաւասար) ինչպէս դուք արեցիք, լինելով „Նոր-Դար“-ի առաջին խնկարկողը, չուտով դարձաք „Մեղուական“, Թերևս յօդուածդ չը տպագրելու համար *)։

Բանանցիցի՝ Արամ Եպիսկոպոսեանց.

*) Մեր կողմից պարոնի դէմ ոչինչ չունենք, նա կարող էր Նոր-Դարական լինել, բայց մի ուրիշ աւելի «անկողմնապահ“ Թերթի հանդիսանալով պէտք է, որ մեզ հայհոյէր—այդպէս են դասակարգվում։ Խմբ.

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

19 Մարտի.

Լօնդօն—24⅝ և 24¾—Համբուրգ—210¾, 211½ և 210¾—Փարիզ—259¾ և 260⅛. Պօլուիմպերիալը—7 րուբ. 97 կ. սակ.։ Մաքսատան կուպոնները—7 րուբ. 97 կ. սակարկ.։ Արծաթը 1 րուբ. 27 կ. սակ.։ Բօրսային դիսկոնտ. —5¾ րուբ. և 6¾%։ Պետական բանկի 5% տոմս. 1-ին շրջանի — 98½ րուբլի գն. 2-րդ —98½ ր. սակարկ. 3-րդ—98 ր. 37 կ. գն.։ 4-րդ—98 ր. 37 կ. գն.։ 5-րդ—98 ր. 37 կ. գն.։ Արևել. փոխառութեան 100 և 1000ր. 5% տոմսեր. 1-ին շրջանի —97 ր. սակ., 2-րդ—97 ր. 124. սակ. 3-րդ—97 ր. 12 կ. սակ. Վիճակահանութ. տանող 5% տոմսեր. 1-ին շրջանի 218 ր. սակարկ., 2-րդ—207 րուբ. սակ. 5½ % բենտեր—102¾։ Ոսկէ բենտը—165½ ր. սակարկ.։ Նոր կօնսօլ փոխառութիւն—142¾ ր. սակարկ։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ընդհանուկ տեսութիւն երկաթուղին։

ԴՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԻԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաղումի պոստ. գնում է ժ. 8—31 րոպ. առ.
Բաղումից „ գալիս է „ 10—25 „ գէշ.
Բագու ապր. և ճանապ.
գնացքը գնում է . . „ 10—45 „ առ.
Բագուից „ „ գալիս է „ 2—30 „ ցեր.
Շաբաթը երկու անգամ ապրանքի և ճանապարհորդների գնացքի տեղ ուղևորվում է արագընթաց գնացքը։
Բագու գնում է երկշաբթի և շաբաթ օրերը . . . . „ 10—58 „ երեկ.
Բագուից գալիս է երկշաբթի և ուրբաթ օրերը . . . . „ 7—53 „ առա.

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го Марта 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի ա. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12.

# ՆՈՐ-ԴԱՐ

№ 45 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հաբաթ 23 Մարտի **1885** Հաբաթ 23 Մարտի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 45

Տարեկան 10 բուբլի. վեց ամսով՝ 6 բուբլի. երեք ամսով՝ 3 բ.50 կ.
Հասցէ 5 կոպէկի
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչ 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով և Յայտարարությունների տառին 2 կ., երկրամասերի համար՝ կրկնապատիկ։


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

—

Առաջնորդող։—Մեր երկրի տնտեսական դրության ասպետ։

Քրոնիկոն.—Լուրեր Մոնպելիէից ապտ։

Քաղաքական.—Եգիպտոս։ Սուդան։

„Նոր-Դար“-ի պատասխանները։

Հեռագրներ։

Առևտրական տեղեկատու։

Յայտարարություններ։

Թիֆլիս, 22 Մարտի 1885 թ։

## ՄԵՐ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԵՍՆ ԱՌԹԻՒ.

—

Առևտրական ճգնաժամ է, փող չը կայ, գործ չը կայ, առևտուր չը կայ... այդ զանգատները այսօր ամեն կողմից լսվում է, և ոչ ոք գոհ չէ ներկայ դրությունից։ Բայց դա մի անսովոր երևոյթ չէ մեր երկրի համար և արդի առևտրական ու տնտեսական նեղ վիճակը կարելի էր վաղուց գուշակել։ Մի երկիր, որ դեռ անմշակ է մնում, որի տնտեսական դրությունը տարօրինակ պայմանների մէջ է գտնվում և առևտուրը անկանոն է, հասկանալի է, որ այդ երկրում ներմուծած մեծաքանակ ապրանքի դումարներին սպեք է յաջորդեր անխուսափելի առևտրական և տնտեսական ճգնաժամը։

Մեր երկիրը Եւրոպայի և Ասիայի մէջ տեղը, այսպէս ասած, դրանց ճանապարհի վերայ գտնուելով, արդէն մի քանի տասնեակ տարի է, որ դրա առևտրական և տնտեսական հիմունքները հետզհետէ փոփոխությունների են ենթարկվում, և այսօր դրանք ոչ մի կանոնաւոր, մի հիմնաւոր բան չեն ներկայացնում, ոչ նոր, եւրոպական են և ոչ էլ հին, ասիական։ Ընդհանրապէս մեր առևտրական գործերը առաջ են մղվում այն հոգւով և այն հիմունքների վերայ, ինչ հոգւով ներշնչուած են և ինչ հիմունքներով գործում են Կալիֆօրնիայի կամ Սիբիրիայի ոսկէ կամ արծաթէ հանքերի մօտ գտնուղ կողմերից հաւաքուած բազդախնդիր մարդիկ։

Մեր երկրի կացութեանը տիրապետող երկու հիմունք կան. գործի մէջ—հեշտ և շուտ, առանց աշխատանքի, հարստանալու տենդը, իսկ կեանքի մէջ —կարողութիւնից վեր շռայլաբար ծախսելու սխտը։

Դրանց դժբաղտաբար աւելի զարկ են տուել արևելեան պատերազմները, երկրի բարոյական վիճակին էլ մեծ հարուածներ հասցրնելով։

Այդպիսի հիմունքների վերայ դրած երկրի առևտուրը միշտ ճգնաժամերին կը լինի ենթարկուած, երկրի տնտեսական դրութիւնը չի բարւոքուիլ և ապագայ սերունդների կացութիւնն էլ անապահով և թշուառ կը լինի։

Մենք այն վարդապետութիւնը չենք ընդունում, որ մոդայի, նորութեան, պճնասիրութեան և այլն դեմ բացարձակ պատերազմ է հրատարակում, որովհետև այդ վարդապետութիւնը միշտ կը մնայ «ձայն բարբառոյ յանապատի», քանի որում կեանքը փոփոխութիւն է սիրում, ապրողը կեանք վայելել է ուզում։

Մենք ուզում ենք միայն, որ կեանքի այդ վայելումը աւելի երկարատև լինի, որ մի փոքրիկ քաղցրութիւնը կապուած չը լինի բազմաթիւ դառն տառապանքների հետ, այդ պատճառով չափաւորութիւնը, աշխատանքի, կարողութեան համեմատ ծախսելը անհրաժեշտ ենք համարում միշտ ապագան, մեծ մասամբ անորոշ ապագան ի նկատի առնելով։

Մենք քաղաքա-տնտեսութեան այն վարդապետութեան չենք հետևում, որ մեր երկրի կացութիւնը, ապագան ամեն կերպ ապահովելու համար ձգտում է այնպիսի մի դրութեան, որ այդ երկիրը այլ ևս կախում չունենայ մի ուրիշ երկրից, որ ինչ որ իրեն հարկաւոր է. ինքն արդիւնաբերի իւր մէջ։

Այդ վարդապետութեան հետևելով այսօր մենք պէտք է դրամագլուխ, աշխատանք, ժամանակ վատնէինք մեր երկրում այն բանը արդիւնաբերելու, որից աւելի լաւ աւելի սակաս ծախքով կարող ենք մի ուրիշ երկրից ձեռք բերել։ Աւելի խելացին այն է, որ մենք մեր երկրի տնտեսական դրութիւնը, նրա միջոցները, նրա կարողութիւնը և նրա զարգացման աստիճանը ի նկատի առնելով, մեր դրամագլուխը, մեր աշխատանքը, մեր ժամանակը գործ դնէինք այն բանի համար, որը աւելի դիւրին է ձեռք բերելու և աւելի օգտաւէտ և արդասաւոր է մեր երկրի համար։

Առևտրական, տնտեսական արդի նեղ կացութիւնը որքան էլ որ ծանր է մեզ համար, բայց դա մի լաւ դաս է և պէտք է որ մեզ սթափեցնէ մեր խորը քնից, որպէս զի մենք աչքներս բանալով, մեր շուրջը նայենք, անցեալին մնաս բարև ասենք և վերջապէս հաւատանք, որ անցնում են այն երանելի օրերը, ուր մենք առանց աշխատելու կարողանում էինք ապրել և աւելի ուրիշի լիմարութեան քան մեր խելքի վերայ հիմնուելով, կարողանում էինք հարստանալ։

Երկրի մեծ մասը առանց կանոնաւոր մշակութեան է մնում, երկրի բերքերը չեն կատարելագործվում, երկրի բնական հարստութիւնները բարձի են թողուած, երկրագործութիւն, արհեստ և այլն դրեթէ երեսի վերայ ձգուած, ամենքն էլ ծախող են դառել և ապրանքն էլ ուրիշ տեղերից են բերում... Կը կամենայինք իմանալ եթէ ամենքը ծախող են, առնողն ով պէտք է լինի և ինչ միջոցներով։

Պէտք է առևտրից ձեռք վերցնել, նրան սահմանափակել, պէտք է, որ մեր ժողովուրդը արհեստի և երկրի մշակութեան վերայ մըտածէ։

«Քամու բերածը, քամին կը տանէ» ասում է ժողովրդական առածը՝ դիւրութիւնամբ ձեռք բերած հարստութիւնը, դիւրութեամբ էլ ձեռքից գնում է, հարիւր հազար հոգու մէջ հազիւ թէ մէկին յաջողուի այդ ճանապարհով մինչև երկրորդ կամ երրորդ սերունդը հարուստ մնալ։

Բայց ինչ արհեստներից սկսել, ինչպէս մշակել երկիրը, որ ճիւղն ընտրել... կարող են հարցնել։

Այդ ճանապարհի վերայ էլ պէտք է աստիճանաբար առաջ գնալ, ի հարկէ Լիոնի կերպասները շինելու համար գործարանները չը պէտք է բանալ, նախ պէտք է սկզբից, հեշտից սկսել։ Մենք բերքեր, հում նիւթեր ունինք, որոնք անմշակ են մնում կամ մըշակվում են նահապետական ձեւով։

Հանքերը բովագործելուց, գործարանները հիմնելուց առաջ պէտք է գինեգործութիւնը, շերամապահութիւնը, անտնապահութիւնը և երկրի միւս առատ բերքերի մշակութիւնը առաջ տանել։ Մեր երկրի նշանաւոր բերքերից մէկը տրոնն էր, որը ընկաւ ալիքարինի պատճառով, բայց գինու, մետաքսի, բամբակի, բուրդի վաճառահանութիւնից միայն որքան օգուտ կարող է ստանալ մեր երկիրը, եթէ դրանք, ինչպէս հարկն է, մշակուին և պատրաստուին։

«Նոր-Դար»-ը իւր ծրագրին համեմատ նպատակ ունի ընտիր յօդուածներով նպաստելու և երկրի տնտեսական զարգացմանը և նիւթական բարօրութեանը։ Մենք որքան կարողանք և որքան թերթի էջերը ներում էին, հրատարակեցինք մասնագէտներից այդ ճիւղին վերաբերեալ աշխատութիւններ։

Այդ ճիւղին աւելի ընդարձակ տեղ տալու, գիւղատնտեսութեան վերաբերեալ յօդուածներն աւելի մատչելի անելու հասարակ և գիւղական դասին և նրա սիրտը ու միտքը ընտիր, բարոյական և նրբան մատչելի լեզուով գրուած վէպերով, զրոյցներով և պատկերներով մշակելու համար արդէն մի քանի ամիս է, որ մենք մտածում ենք ամիսը մի անգամ «Նոր-Դար»-ի հետ իբրև յաւելուած հրատարակելու մեկ կամ երկու տպագրական թերթ, որի մէջ բացի հասարակ դասին մատչելի ընթերցանութեան ընտիր յօդուածներից բովանդակում լիներ այլ և գիւղատնտեսութեան վերաբերեալ մասնագիտական աշխատութիւններ։ Մեզ աւելի մտածմունք էր պատճառում մասնագիտական յօդուածներ գրող-աշխատակիցների խնդիրը, թէպետև յաւելուածի հրատարակութեան պակասը երկու շաբաթ է, որ այդ յաւելուածի հրատարակութեան պայմաններն է մշակում։

Այժմս ուրախ ենք, որ այդ յաւելուածը հրատարակելու մի գըլխաւոր դժուարութիւնից ազատուած ենք։ Փրանսիայի Մոնպելիէ քաղաքի հայ ուսանողները կամենալով մեր երկրի գիւղատնտեսութեան զարգացմանը նպաստել, մի միութիւն են հաստատել «ուսանողաց ակումբ» անունով, որի նշանաբանն է «ուղղել և ուղղիչել»։ Գեղեցիկ և գովելի գործ, ամենայն քաջալերութեան արժանի։ Ուսանողների ակումբը ինքը առաջարկում է մեզ աշխատակցել «Նոր-Դար»-ին և օգնել մեզ մեր թերթի ծրագրի տրնտեսական բաժինը լրացնելու համար։ Մոնպելիէի հայ ուսանողները իրենք նոյնպէս մտածել են «Նոր-Դար»-ի հետ մի յաւելուածի հրատարակութեան մասին։ Սոյն յաւելուածի հրատարակութիւնը կարծում ենք, որ ընթերցող հասարակութիւնը սիրով կընդունէ և գուցէ գոնուին մարդիկ, որոնք գործի կարևորութիւնը տեսնելով նպաստեն այդ գործին։

Երբ մենք յաւելուածի հրատարակութիւնը կարողացանք ապահովացնել, այն ժամանակ կը յայտնենք նրա հրատարակութեան և պայմանների մասին։

Ս. Ս.

## ՔՐՈՆԻԿՈՆ

Տօներից յետոյ „Նոր-Դար“-ի առաջնակարգ համարը լոյս կը տեսնի մարտի 29-ին։

—

Ստացանք «Երևանի Յայտարարութիւնները» թիւ 11 այս տարուայ առաջին համարը (հրատարակ. 17 մարտի)։ „Անեկդոտներ և ծիծաղաշարժ զրոյցներ“ բաժանմունքի տակ մեր տեղական հայոց պատրիարքական հրատարակութիւնների վերաբերութեամբ դուարճալի կէս լուրջ կէս հանաքով խորհրդակցութիւններ են գրուած։ Իրաքանչիւրը իւր «միտը» ստանում է ցանկութիւններով համեմած։

—

Շնորհակալութեամբ ստացանք Շիրվանզադէից իւր հեղինակած «Ծնունդ» վէպիկը։ Հրատարակիչն է Սիմեոնը, տպուած է Թիֆլիսում, Մարտիրոսեանի տպարանում։ Թուղթը և տիպը բաւականին մաքուր և լաւ են, գինն է 50 կոպ։ Արդիւնքը նշանակուած է Բագուի աղքատ աշակերտների օգտին։

—

Գօլոից պատրիարքական տեղապահի գաւառական առաջնորդներին ուղղած շրջաբերականի պատճէնը ընտրութեան վերաբերութեամբ հրատարակում ենք հետևեալում.

Կ. Գօլոս, 4 մարտ 1885

«Ազգային Ներսիսեանական ժողովն իւր վերջին նստին մէջ՝ որ տեղի ունեցաւ ամսոյս 1-ին, ուշադրութեան առնելով Ս. Էջմիածնայ Ընդհանրական Հայրապետին ընտրութեան կանոնքն՝ որոշեց,

Ա. Այս անգամ ևս մասնակցել ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, համաձայն 1884-ի եղանակին։

Բ. Համաձայնութեամբ ժողովոյ և Ազգային ժողովոյ անցեալ տարուան կատարած Կաթողիկոսական ընտրութիւնները նոյնութեամբ ընդունել, Համաձայնութեամբ ժողովոյ եօթն ընտրելեաց ցանկը լրացնելով վիճակաւ դուրս մնացեալ Եպիսկոպոսին անուամբ և Ազգային ժողովոյ եռանուն ցանկը՝ որ պակասած է հոգելոյս Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքի վախճանելովն, լրացնել նոյն եռանուն ցանկին դուրս առաւելագոյն քուէ ստացող Եպիսկոպոսին անուամբ։

Գ. Ցանձնարարել Ազգային Վարչութեան որ անյապաղ գործադրէ Ազգ. Ժող. նախորդ որոշումն, որ է Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան համար օրինական հրահանգն տալ անմիջապէս գաւառական Առաջնորդաց, այսինքն հեռագրել թէ Գաւառական Վարչութիւնք և Առաջնորդք ուրեք կերպիւ չենք կրնար պատասխանել իրենց հաղ սինոդական հրաւէրին, այլ միայն յայտարարելով թէ՝ «Ըստ տրամագրութեան 61-րդ յօդուածոյ Ազգային Սահմանադրութեան Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու իրաւունքն Կ. Գօլսոյ Ազգային Ժողովոյն սեփականեալ ըլլալով նա է միայն իրենց օրինաւոր ներկայացուցչն»։ Հետևաբար տաբրեր կերպիւ վարուող Առաջնորդք և Վարչութիւնք պատասխանատու կը մնան ուսաջի օրինաց և Ազգին։

Այդ՝ ըստ տնօրէնութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ, Հաղորդելով Ձեզ Ազգային Ժողովոյ սոյն երեսակ որոշումներն, կը հրաւիրեմք զՁեզ ի գործ դնել անթերի ինչ որ նոյն որոշմանց երրորդն պարտաւորութիւն կը դնէ Ձեր վերայ, և տեղի չը տալ Ձեր կողմանէ ապագայ որ և է պատասխանատուութեան։

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀ

—

Ա. Զ. Դ

«Նոր-Դար»-ի միջոցաւ Մոնպելիէայի Հայ ուսանողաց ակումբը դիմում է պ. պ. գաւառական ուսուցչաց և ամեն